

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 21/3

23 ապրիլի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Թամարա Անթանեսյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 24.02.2014 թ-ի թիվ 74 որոշման դեմ:

Ա/Ձ Թամարա Անթանեսյանի գանգատում բերված փաստարկները.

2002 թ-ի մայիսի 7-ին Ա/Ձ Թամարա Անթանեսյանը ստացել է ԱՁ-ի պետական գրանցման վկայական: 2002 թ-ի նոյեմբերի 29-ին որոշել է դադարեցնել ձեռնարկատիրական աշխատանքը և կատարել է բոլոր սահմանված վճարումները:

2014 թ-ի մարտ ամսին ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ նամակով տեղեկացրել է, որ 17.02.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Թամարա Անթանեսյանը ունի չկատարած հարկային պարտավորություններ և այդ հսկայական գումարը ենթակա է պարտադիր գանձման:

Որպես անհատ ձեռներեց իր գործունեության ընթացքում բարեխղճորեն կատարել է բոլոր հարկային պարտավորությունները: Գործունեությունը դադարեցնելու պահին որպես ԱՁ պարտավոր չէի ԱՁ վկայականը հանձնել համապատասխան մարմիններին: Այդ որոշումն ընդունվել է 2005 թ-ին Կառավարության որոշումով, ինչի մասին Ա/Ձ Թամարա Անթանեսյանը երբևէ իրազեկված չի եղել ոչ հարկային մարմինների, ոչ էլ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, որի արդյունքում հավաքվել է նշված պարտքը:

Քանի որ ՀՀ օրենքները չունեն հետադարձ ուժ և ըստ էության, այդ պարտքը կուտակվել է չիրականացված գործունեության ընթացքում, Ա/Ձ Թամարա Անթանեսյանը կարծում է, որ պահանջվող գումարն անարդարացի է և անօրեն :

Արդեն որերորդ անգամ դիմել է ՊԵԿ Թումանյանի տարածքային ստորաբաժանում, որն համակարգում էր հարկային գործունեությունը: Ա/Ձ Թամարա Անթանեսյանը պահանջել է իր անձնական քարտը, խնդրել է վերանայել հաշվետվությունները, սակայն պատճառաբանում են, որ իրենց մոտ եղած արխիվը տնօրինում է Վանաձորի ՏՀՏ-ն: Վանաձորի ՏՀՏ-ում միայն շատ կոշտ վերաբերմունքով ճանապարհում են՝ ամբողջ մեղքը բարդելով իի վրա: Սակայն իրեն հայտնի է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ հարկ վճարողն իրավունք ունի ծանոթանալ իր գործունեության ստուգումներին և ակտերին:

Հարկային պարտավորությունները և դրանց մարումները օրենքով սահմանված վճարման վերջնաժամկետ են ունենում: Եթե իրեն դիտարկում են որպես հարկային մարմնում հաշվառված սուբյեկտ և իր հանդեպ իրականացնում են վարչարարություն, ապա ինչու 2002 թ-ից կուտակված գումարի դիմաց վերջնաժամկետ է նախընտրվել միայն 2014 թվականը: Հարկ է նշել նաև, որ գործունեությունը դադարեցնելուց անմիջապես հետո՝ 2002 թվականին, ապամոնտաժվել է խանութի շինությունը:

Վերջապես, այսքան տարիների ընթացքում առանց հարկային պարտավորություններ կատարելու հարկային գործունեություն իրականացնելն ինչու ժամանակին չի համարվել ապօրինի գործունեություն և վաղաժամ չի ծանուցվել պարտավորությունների մասին: Ի վերջո, հարկ է հաշվի առնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետը: Հետևապես Ա/Ձ Թամարա Անթանեսյանը խնդրում է պարզաբանել, թե որ հաշվետու տարվա համար է հայտնաբերվել և առաջադրվել պարտավորությունները, և արդյոք այս նույն խախտումը հնարավոր չէր հայտնաբերել ավելի վաղ, այլ ոչ հիմա, երբ արդեն այրի է, աշխատանք չունի և 2-րդ կարգի հաշմանդամ է:

Ելնելով վերագրյալից՝ Ա/Ձ Թամարա Անթանեսյանը խնդրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ-ի 24.02.2014թ. թիվ 74 որոշումը համարել անվավեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Թամարա Անթանեսյանը Վանաձորի ՏՀՏ-ում հաշվառված է որպես հարկ վճարող 24.05.2002 թ-ից: Ներկայումս Թամարա Անթանեսյանի պարտավորությունները պետական բյուջեի նկատմամբ կազմում են 383740 դրամ, այդ թվում՝ հաստատագրված վճարի գծով ապառք 7670 դրամ, տույժ 4618 դրամ, սոցիալական ապահովության վճարի գծով ապառք 240000 դրամ, տույժ 131452 դրամ:

Հաստատագրված վճարի պարտավորությունը առաջացել է 15.10.2002 թ-ին: Մասնավորապես, Թումանյանի ՏՀՏ ներկայացված 2002 թ-ի 3-րդ եռամսյակի 30 քմ մակերեսից ոչ ավելի առևտրական տարածք ունեցող խանութների, կրպակների ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարության համաձայն մնացորդը կազմել է 7670 դրամ, իսկ դրա նկատմամբ <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23 հոդվածի համաձայն հաշվարկված տույժերը 4618 դրամ:

Սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորություններն առաջադրվել են 2009, 2010, 2011, 2012 թ.թ. համար <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն հաշվարկված նվազագույն սոցիալական վճարներից՝ գումարով 240000 դրամ (48 ամիս x 5000) և <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն հաշվարկված տույժերից՝ գումարով 131452 դրամ:

Միաժամանակ հարկ է նշել, որ համաձայն 19.12.2012 թ-ի <Հարկային և սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին> ՀՀ օրենքի դրույթների՝ Ա/Ձ Թամարա Անթանեսյան սոցիալական ապահովության վճարի պարտավորություններից պակասեցվել է 649.950 դրամ, այդ թվում՝ ապառք 420000 դրամ, տույժ 229950 դրամ:

Հարկ է նշել, որ Ա/Ձ Թամարա Անթանեսյանի կողմից 2002 թ-ին հարկային տեսչություն ներկայացվել է դիմում գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ, սակայն որևէ ապացույց անհատ ձեռներեցի վկայականը հարկային տեսչություն հանձնվելու վերաբերյալ առկա չէ:

Տվյալ դեպքում, քանի որ Ա/Ձ Թամարա Անթանեսյանը օրենսդրությամբ սահմնված կարգով հարկային տեսչություն չի հանձնել անհատ ձեռնակատիրոջ վկայականը, հարկային տեսչությունը շարունակել է հշվարկել սոցիալական ապահովագրության հիմնադրամից սոցիալական ապահովագրության վճարների գծով փոխանցված պարտավորությունները:

Հանձնաժողովի 15.04.2014 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն Ա/Ձ Թամարա Անթանեսյանի գանգատը մերժվել է:

Ի կատարումն ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային

մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ):

Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ա/2 Թամարա Անթանեսյանի գանգատը մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ